ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՄՇԵՆԱՀԱՅԵՐԻ ԿԱՑՈՒԹՅՈՒՆՆ ԱԲԽԱԶԻԱՅՈՒՄ 1918–1920 ԹԹ.

ԲԵՆԻԱՄԻՆ ՄԱՒԼՅԱՆ

1864-ից ի վեր, երբ վերացվեց Աբխազական իշխանությունը, աբխազների զգալի մասը ռուսական իշխանությունների հետ լուրջ հակասություններ ուներ: 1877 թ. ռուս-թուրքական պատերազմի ընթացքում մոտ 80 հազար աբխազներ լքեցին պատմական հայրենիքը և հաստատվեցին սուլթանական Թուրքիայում: Միաժամանակ Աբխազիան արագորեն բնակեցվում էր էթնիկ տարբեր խմբերով (ռուսներ, հույներ, մեգրելներ, էստոնացիներ, գերմանացիներ), այդ թվում 1879-ից Տրապիզոնի վիլայեթից գաղթած համշենահայերով: XIX դ. վերջերին հայոց ներգաղթը զգալի աճեց, մանավանդ 1894–1896 թթ. կոտորածների հետևանքով: Գաղթական համշենահայերից շատերը բնակություն էին հաստատում հարևան Սոչիի շրջանում: Եթե 1886 թ. հայերի թիվը Աբխազիայում կազմում էր 1050, ապա 1897 թ. համառուսական մարդահամարի տվյալներով այնտեղ բնակվում էր շուրջ 6500 հայ[1]: Հայերի վերաբնակեցմանը նպաստում էր ռուս գործարարների աջակցությունը, քանի որ նրանք լավատեղյակ էին ծխախոտագործության ասպարեզում համշենահայերի վարժ մասնագետ լինելուն[2]: Հայ գյուղացիները կապալավարձի հիմունքներով աբխազ իշխաններից վերցրած հողատարածություններում կարճ ժամանակամիջոցում բնակավայրեր կառուցեցին, չորացրին ճահճուտները, խիտ անտառներից մաքրած տարածքներում հիմնեցին ծխախոտի տնկաստաններ: Մի քանի տարում նրանց աճեցրած բարձրորակ ծխախոտը նվաճեց Ռուսաստանի շուկան[3]: Ռուսական իշխանությունն Աբխազիայի հայերին համարում էր ժամանակավոր վերաբնակիչ և Ռուսաստանի կայսրության հպատակություն չէր տրամադրում[4]: Համշենահայերի միայն 5% տարբեր միջոցներով հպատակություն ձեռք բերեց, ինչը թույլ տվեց նրանց մշակելի հող գնել[5]: Եկամուտները հնարավորություն էին տալիս կանխիկ վճարել կապալավարձը: Համշենահայերը մեծ գեր ունեցան երկրամասի տնտեսական զարգացման գործում[6]: Փոխշահավետ հարաբերությունների հաստատումը նպաստում էր աբխազների և հայերի միջև բարիդրացիական կապերի ամ-

---

[1] История Абхазии. Гудаута, 1993, с. 208-209.

[2] Там же, с. 207.

[3] *Հայաստանի Ազգային Արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), Արտաքին գործերի նախարարության ֆ. 200, ց. 1, գ. 409, թ. 60:*

[4] *Նույն տեղում, թ. 11-12:*

[5] *Նույն տեղում, թ. 46:*

[6] М. Минасян. Переселение амшенских армян на Черноморское побережье Кавказа и первые шаги их хозяйственной деятельности (последняя четверть XIX в.).– "Вестник общественных наук" АН АрмССР, 1977, № 1, с. 64-73.

բապնդմանը: Աբխազների և մեգրելների շահերը, սակայն, բախվում էին, քանի որ վերջիններիս չհաջողվեց շահավետ հարաբերություններ հաստատել աբխազ հողատերերի հետ: Մեգրել գյուղացիների միջավայրում նպաստավոր ասպարեզ էր ստեղծվել հեղափոխական և սոցիալիստական քարոզչության համար, ինչը ևս անընդունելի էր աբխազ իշխանների համար[7]:

Ռուսական կայսրության անկումից հետո դրա ողջ տարածքում, այդ թվում՝ Անդրկովկասում, լուծման հրատապ հարց է դառնում ազգային խնդիրը: Վրացական ազգային շարժման արմատական մասը հանդես եկավ երկրամասի վրացաբնակ շրջաններին քաղաքական ինքնորոշման իրավունք տալու օգտին: 1917 թ. ապրիլի կեսին վրացական կուսակցությունները համաձայնության եկան ապագա Վրաստանի ենթադրյալ սահմանների շուրջ տարածքը բաժանելով «անվիճելի» և «վիճարկվող» շրջանների: Վերջիններիս ընդգրկումը պետք է որոշվեր տեղի բնակչության հանրաքվեի միջոցով[8]: Այս առումով Աբխազիան դասվեց «վիճարկվող» շրջանների կազմում: Իր հերթին, 1917 թ. նոյեմբերի 8-ին գումարված աբխազական ժողովրդի համագումարը ստեղծեց Աբխազական ժողովրդական խորհուրդ (ԱԺԽ), որն, արտահայտելով համագումարի կամքը, հանդես եկավ կազակների և Կովկասի լեռնականների Հարավ-Արևելյան միությանը միանալու օգտին՝ ենթադրվող Ռուսաստանի դեմոկրատական հանրապետության կազմում[9]: Միության կազմալուծման և Ռուսաստանի հարավում 1918 թ. սկզբին քաղաքացիական պատերազմի պատճառով դա չիրականացավ: 1918 թ. փետրվարի 9-ին Աբխազական ժողովրդական խորհուրդը և Վրացական ազգային խորհուրդը համաձայնագիր կնքեցին, ուր ասված է, որ Աբխազիայի քաղաքական կառուցվածքի ապագա ձևը պետք է մշակվի այս միավորի հիմնադիր ժողովում՝ ելնելով ինքնորոշման սկզբունքից[10]:

1918 թ. ապրիլի 8-ին Աբխազիայում հաստատվեցին խորհրդային կարգեր, սակայն առանց պետականության վերականգնման[11]: Ուստի աբխազների մեծամասնությունը հրաժարվեց բոլշևիկների կուսակցությանն աջակցելուց: Բոլշևիկներն Աբխազիայի հայերի աջակցությունը ստանալու նպատակով քարոզչություն էին տանում, խոստանալով, որ նրանք, խորհրդային իշխանության օգնությամբ, առանց հպատակություն ստանալու, կարող են տիրել կապալավարձով մշակվող հողատարածքներին[12]: Սակայն դեռևս 1918 թ. փետրվարին հայերից կազմված Կարմիր գվարդիայի ջոկատը, որը գտնվում էր Սուխումի բանվորական պատգամավորների Խորհրդի ենթակայության տակ, վճռական գեր ունեցավ տեղի

---

[7] Д. Гамахария, Б. Гогия. Абхазия – историческая область Грузии с древнейших времен до 30-х годов XX века (историография, документы и материалы, комментарии). Тбилиси, 1997, с. 393-395, док. № 213.

[8] А. Ментешашвили. Октябрьская революция и национально-освободительное движение в Грузии 1917-1921 гг. Тбилиси, 1987, с. 65.

[9] С. Лакоба. Очерки политической истории Абхазии. Сухуми, 1990, с. 63; История Абхазии, с. 23.

[10] Д. Гамахария, Б. Гогия. *Նշվ. աշխ., էջ 402, վավ. № 218:*

[11] Г. Дзидзария. Советская власть в Абхазии в 1918 году. Сухуми, 1972.

[12] Д. Гамахария, Б. Гогия. *Նշվ. աշխ., էջ 411, վավ.* № 221:

բոլշևիկների ելույթի ճնշման գործում[13]: Մինչև խորհրդային կարգերի վերացումը՝ մայիսի 17-ը, Աբխազիան համարվում էր Խորհրդային Ռուսաստանի մասը: 1918 թ. ապրիլի 9-ին՝ Անդրկովկասի ժողովրդավարական դաշնային հանրապետությունը Ռուսաստանից անկախ հռչակելու պահին՝ Աբխազիայի տարածքը չէր վերահսկվում անդրկովկասյան նորաստեղծ կառավարության կողմից: Սեյմին ենթակա վրացական զինված ջոկատները, գրավելով Սուխումը, թույլատրեցին բոլշևիկների կողմից բռնարդելված ԱԺԽ-ի գործունեությունը, թեպետ լիակատար իշխանությունն անցավ վրացական ժողովրդական գվարդիայի հրամանատարությանը[14]: Բոլշևիկյանից բացի Աբխազիայում տարածում ուներ քաղաքական երկու կողմնորոշում ևս: Առաջինը՝ իշխաններ Ա. Շերվաշիձեի և Թ. Մարշանիայի գլխավորած աբխազ բնակչության մի մասը ցանկանում էր երկրամասը տեսնել հյուսիսկովկասյան ժողովուրդների հետ միասնական պետության մեջ: Այդ հարցին դրական լուծում տալու նպատակով նրանք մեկնեցին Բաթում, որտեղ 1918 թ. մայիսի 11–26-ը կոնֆերանս գումարվեց: Այդ օրերին Բաթումում, Թուրքիայի աջակցությամբ, հռչակվեց Հյուսիսկովկասյան լեռնականների հանրապետությունը: Աբխազական պատվիրակները Թուրքիայի հովանավորությունն էին փնտրում լեռնականների հանրապետության կազմի մեջ ընդգրկվելու նպատակով[15]: Աբխազների քաղաքական մյուս թևը, որի զգալի մասը ծագումով Սամուրզականո գավառից էր (ներկայիս Ղալիի շրջան), որտեղ մեծ թվով մեգրելներ են բնակվում[16], նույնպես պատվիրակություն կազմեց: Օգտվելով վրացական գվարդիայի հրամանատար Վ. Ջուղելիի աջակցությունից, պատվիրակությունը մեկնեց Բաթում՝ մերժելու առաջին պատվիրակության անդամների լիազորությունները և հայտարարելու Անդրկովկասի դաշնությանը Աբխազիայի անդամակցելու ցանկության մասին[17]:

Թուրքական զորքերի ներխուժումը տրոհեց Այսրկովկասի միասնությունը: Այդ պահին թուրքամետ կողմնորոշման արխազ գործիչների ջանքերը՝ Աբխազիան Հյուսիսկովկասյան լեռնականների հանրապետության մաս դարձնելու ուղղությամբ, ապարդյուն եղան, քանի որ Թուրքիայի՝ ավագ դաշնակից Գերմանիան իր վրա վերցրեց նորաստեղծ վրացական պետության հովանավորության առաքելությունը: Ինչպես դրում էր գերմանական պետական և ռազմական գործիչ Լյուդենդորֆը, Վրաստանի նկատմամբ հովանավորությունը Գերմանիային Թուրքիայից անկախ ճանապարհ էր տալիս դեպի Բաքու[18]: 1918 թ. մայիսի 26-ին, Վրաստանի անկախության հռչակման պահին, Աբխազիան կառավարվում էր Վրաց ազգային խորհրդին ենթակա ռազմական ուժի կողմից: Ընդունելով Գերմանիայի հովանավորությունը՝ վրացական կառավարությունն Աբխազիայի

---

[13] Նույն տեղում, էջ 404, վավ. № 219:

[14] Նույն տեղում, էջ 413, վավ. № 224:

[15] История Абхазии, с. 291.

[16] Там же, с. 283, 209; Г. П. Л е ж а в а. Между Грузией и Россией: исторические корни и современные факторы абхазо-грузинского конфликта 19-20 вв., М., 1997 с. 160.

[17] Д. Г а м а х а р и я, Б. Г о г и я. Նշվ. աշխ., էջ 79:

[18] С. Л а к о б а. Ответ историкам из Тбилиси. Сухуми, 2001, с. 29.

նկատմամբ իրավունքի ճանաչում ստացավ[19]: Վրաստանի ենթադրյալ սահմանների հարցը, փաստորեն, լուծվում էր գերմանական գերագույն հրամանատարության գաղտնի նամակում: ԱԺԽ-ն տեղյակ չլինելով այդ պայմանավորվածությունների մասին, 1918 թ. հունիսի 2-ին որոշում ընդունեց Վրացական ժողովրդավարական հանրապետության հետ հարաբերությունների վերաբերյալ և Անդրկովկասի դաշնության տրոհման պատճառով հայտարարեց Վրաստանի հետ իրավական կապերի խզման մասին: Միաժամանակ որոշումը հռչակում էր ԱԺԽ-ն որպես միակ պետական իշխանություն Աբխազիայի տարածքում[20]: Սակայն բոլշևիկյան վտանգը և վրացական զորքերի ներկայությունը ստիպեցին բանակցություններ վարելու նպատակով Թիֆլիս պատվիրակություն ուղարկել: ԱԺԽ-ի պատվիրակները 1918 թ. հունիսի 8-ին և 11-ին Թիֆլիսում Վրաստանի կառավարության հետ ստորագրեցին պայմանագրեր, որոնց համաձայն տեղի բոլշևիկների դեմ պայքարելու համար Աբխազիա ժամանեցին լրացուցիչ վրացական զորքեր: Այդպիսով, Վրաստանի իշխանությունները ճանաչեցին Աբխազիայի ինքնավար լայն իրավունքները, սակայն բաց մնաց Վրաստան-Աբխազիա վերջնական փոխհարաբերությունների հարցը, որը, համաձայն պայմանագրերի, պետք է վճռեր Աբխազիայի ենթադրվող Ազգային ժողովը[21]:

Ռուսական կայսրության տապալումից հետո աբխազական ազգային շարժման մի շարք գործիչներ առաջ քաշեցին Թուրքիայից մուհաջիրների հայրենադարձության գաղափարը[22], միաժամանակ Աբխազիայի հայերին ու հույներին հայտարարելով իրավազուրկ և ժամանակավոր բնակիչներ, որոնց մեծ մասը այդպես էլ մնացել էր գաղթականի կարգավիճակում և համարվում էր թուրքահպատակ[23]: Լայն տարածում ուներ «Աբխազիան՝ աբխազների համար» կարգախոսը[24]: Սեյմի կառավարման հաստատումից հետո, օգտվելով իշխանության թուլությունից, Սուխումի շրջանի Կոդորի և Գուդաուտայի տեղամասերում բնակվող հայերը (հատկապես Պսիրցխա, Անուխվա, Մծարա գյուղերում) կողոպտվեցին թուրքամետ աբխազների և տեղի թուրքերի կողմից: Տեղահան արվեց մոտ 400 հայ ընտանիք, որոնք հեռացան Կուբանի մարզ[25]: Չկարողանալով անմիջականորեն տիրել Աբխազիային, քանի որ այն հայտնվեց Գերմանիայի վերահսկողության գոտում, թուրք իշխանավորները կազմակերպեցին աբխազ մուհաջիրներից բաղկացած դեսանտ, որը 1918 թ. ամռանը ներխուժեց Կոդորի տեղամա-

---

[19] З. А в а л о в. Независимость Грузии в международной политике 1918-1921 гг. Париж, 1924, с. 68-69; А. М е н т е ш а ш в и л и. Նշվ. աշխ., էջ 135–136:

[20] Д. Г а м а х а р и я, Б. Г о г и я. Նշվ. աշխ., էջ 413, վավ. № 224:

[21] А. М е н т е ш а ш в и л и. Из истории взаимоотношений грузинского, абхазского и осетинского народов 1918-1921 гг., Тбилиси, 1990, с. 16. Ն ո ւ յ ն ի՝ Исторические предпосылки современного сепаратизма в Грузии. Тбилиси, 1998, с. 75-78, док. № 2-3; С. Л а к о б а. Очерки..., с. 66-67; А. М е н т е ш а ш в и л и. Октябрьская революция... с. 117; Д. Г а м а х а р и я, Б. Г о г и я. Նշվ. աշխ., էջ 414, վավ. № 225:

[22] «Ալիոնի», 16-23 XI, 1917 (վրաց.):

[23] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, դ. 409, թ. 61:

[24] «Էրթոբա», 17. IV. 1918 (վրաց.):

[25] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, դ. 409, թ. 61: Д. Г а м а х а р и я, Б. Г о г и я. Նշվ. աշխ., էջ 90:

րը[26]: Այս իրադարձությունների ժամանակ ձևավորվեց Սուխումի Հայոց շրջանային ազգային խորհուրդը, որն իր վրա վերցրեց տեղի հայերի ֆիզիկական և քաղաքական պաշտպանությունը: Խորհրդի նախագահության կարծիքով, աբխազները, ունենալով թուրքամետ դիրքորոշում, ձգտում էին թուրքերի միջոցով տեղահան անել հայերին, այդ իսկ պատճառով Խորհուրդն աջակցում էր Վրաստանի կառավարությանն Աբխազիայում, քանի որ դա միակ ուժն էր, որը պաշտպանում էր հայերին թուրքական վտանգից և աբխազների ոտնձգություններից[27]: Սուխումի քաղաքային դումայի իրավասու Ն. Թավդգիրիձեն գրում էր. «Ունևոր աբխազ գյուղացիները երազում են վտարել Աբխազիայից վրացիներին և ընդհանրապես բոլոր վարձակալներին ու ինքնուրույն վերաբաշխել նրանց հողամասերը»[28]:

Վերացնելով Սուխումի շրջանին սպառնացող թուրքական և բոլշևիկյան վտանգը, վրացական զորքերը շարժվեցին դեպի մերձծովյան այլ շրջաններ: 1918 թ. հունիսի 24-ին ԱԺԽ-ն որոշում ընդունեց Սոչիի և Տուապսեի շրջանները գրավելու անհրաժեշտության մասին[29]: Փաստաթղթի ընդունմանը նախորդող իրադարձությունների մասին հուշեր է թողել ԱԺԽ-ի առաջին նախագահ Ս. Բասարիան. նա նշում է, թե երբ վրացական բանակը գրավելով Սոչին արդեն մոտենում էր Տուապսեին, Վրաստանում գերմանական զորքերի հրամանատար ֆոն Կրեսը զգուշացրեց վրացական կառավարությանն այդ քայլի անօրինականության մասին: Այդ իսկ պատճառով վրացական իշխանությունները պահանջեցին ԱԺԽ-ից, որ Տուապսեն համարվի Աբխազիայի սահման, ինչն էլ կարդարացներ Վրաստանի ոտնձգությունները Ռուսաստանի Սևծովյան նահանգի նկատմամբ[30]: 1918 թ. հուլիսի 6-ին վրացական զորքերը գրավեցին Սոչին: Հուլիսի 11-ին Վրաստանի ներկայացուցիչն իր կառավարությանը հղած հեռագրում հաղորդում էր, որ վրացական զորքերի մուտքը սրտանց ողջունվում էր տեղի բնակչության կողմից[31]: Այս շրջանում բնակվում էր 25000 հայ[32]: Ինչպես վկայում է Սոչիի Հայկական ազգային խորհրդի 1918 թ. օգոստոսի 24-ի նամակը՝ ուղղված Թիֆլիսում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչին, շրջանը Վրաստանին ենթարկելով, նոր իշխանությունն առաջ քաշեց հայերի հպատակության հարցը: Իշխանությունները նրանց առաջարկում էին ընդունել Վրաստանի քաղաքացիություն և ըստ Խորհրդի՝ տեղի հայերի մեծամասնությունը կողմնակից էր դրան, քանի որ մշակվող հողերից զրկվելու վտանգ կար: Ընդունելով քաղաքացիությու-

---

[26] История Абхазии, с. 299-301; Д. Г а м а х а р и я, Б. Г о г и я. *Նշվ. աշխ., էջ 81-82:*

[27] *ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 409, թ. 61:*

[28] *«Սաքարթվելո», 4. VII. 1919 (վրաց.):*

[29] Д. Г а м а х а р и я, Б. Г о г и я. *Նշվ. աշխ., էջ 415, փաստ. № 226:*

[30] С. Б а с а р и я. Абхазия в географическом, этнографическом и экономическом отношении. Сухуми, 1923, с. 92; История Абхазии, с. 303.

[31] *Վրաստանի կենտրոնական պետական պատմական արխիվ (այսուհետև՝ ՎԿՊՊԱ), Վրաստանի ժողովրդավարական հանրապետության կառավարության քարտուղարության ֆ. 1861, ց. 2, գ. 28, թ. 4:*

[32] *ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 409, թ. 60:*

նը՝ հայերը միաժամանակ համաձայն էին զորակոչվել վրացական բանակ[33]:

Վրաստանի կառավարության ոտնձգությունները Ռուսաստանի հարավում հզորացած Սպիտակ շարժման հետ ընդհարման պատճառ դարձան: Նույն ժամանակ պարզ դարձավ, որ Թուրքիայի հովանավորության ներքո Ադրբեջանի և հյուսիսկովկասյան լեռնականների համագործակցություն ստեղծելու մտահղացումը ձախողվել է[34]: Թուրքիայի օգնությանն ապավինող աբխազ գործիչները հիասթափվեցին և Աբխազիայի ապագայի նկատմամբ իրենց հույսերը կապեցին Սպիտակ շարժման հետ[35]: 1918 թ. սեպտեմբերի 25-ին Եկատերինոդարում (այժմ՝ Կրասնոդար) բանակցություններ տեղի ունեցան Կամավորական բանակի հրամանատարության և Վրաստանի կառավարության ներկայացուցիչների միջև: Առաջինները պահանջում էին իրենց վերահսկողությանը հանձնել Սոչին և Գագրան, իսկ Աբխազիայի մնացած տարածքը դարձնել չեզոք գոտի. այդ բանակցություններն անարդյունք ավարտվեցին[36]: Ինչպես գրում էր դեպքերի մասնակից գեներալ Ա. Լուկոմսկոյը, «Վրաստանի համար Սոչիի շրջանը հսկայական նշանակություն ուներ որպես գոտի, որն առանձնացնում էր Կամավորական բանակը Սուխումի շրջանից: Վրաստանի կառավարությունը մտավախություն ուներ, որ անմիջական հարևանությունը Կամավորական բանակի հետ կբերի Աբխազիայի տարանջատմանը Վրաստանից»[37]:

1918 թ. դեկտեմբերի հայ-վրացական զինված հակամարտությունը բացասաբար ազդեց Վրաստանի հայ բնակչության վիճակի վրա: Ըստ Սոչիի Հայոց ազգային խորհրդի 1919 թ. փետրվարի 2-ի գրության, Խորհուրդը բազմաթիվ անգամներ դիմել է շրջանում Վրաստանի ներկայացուցչին՝ բողոքելով վրացական Ծովափնյա ջոկատի զինվորականների կատարած բռնությունների և թալանի վերաբերյալ, որոնք սակայն անարդյունք են մնացել[38]: Նույնը կատարվում էր նաև Վրաստանի հայաբնակ մի շարք այլ մասերում[39]: 1919 թ. հունվարի 8-ին Վրաստանի Հայոց ազգային խորհուրդը վրացական կառավարությանը ներկայացված հուշագրում նշում էր. «... վրաց իշխանության տակ ապրող կես միլիոն հայ ազգաբնակչությունը զրկվեց ամեն իրավունքից, նրա պատիվը, ունեցվածքը, ազատությունն ու գույքերը գարձան միլիցիայի և հատուկ զորամասի պաշտոնյաների ազատ քմահաճույքի առարկա: ...Այլասերման աստիճանի մասին կարելի է գաղափար կազմել նրանով, որ միլիցիոներները և հատուկ զորամասի պաշտոնյաները, հաստատել էին փրկագնի որոշ սակ՝ 50-ից սկսած մինչև 50000 ռուբլի, և սակավ չեն դեպքերը, երբ միևնույն անձին հերթով գիմում ու գրամ են պահանջում երկու հիմնարկության ներկայացու-

---

[33] ՀԱԱ, Թիֆլիսում ՀՀ ներկայացուցչության ֆ. 276, ց. 1, գ. 62, թ. 1:

[34] Նույն տեղում, գ. 30, թ. 12:

[35] Д. Гамахария, Б. Гогия. Նշվ. աշխ., էջ 84:

[36] Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии. Тифлис, 1919, с. 392-409; Деникин–Юденич–Врангель. М.–Л., 1927, с. 96-97.

[37] История Абхазии, с. 305.

[38] ՀԱԱ, ֆ. 276, ց. 1, գ. 140, թ. 3, 4:

[39] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 238, թ. 1-55: А. Ментешашвили. Октябрьская революция..., с. 131.

ցիչներն էլ, և եթե միամիտը հայտնի, թե ինքը արդեն տվել է, այդ փաստն ինքնին ամրացնում է նոր պահանջողի իրավունքը:...Եվ եթե այս ամենը կատարվում էր Թիֆլիսում, դժվար չէ երևակայել հայերի վիճակը Վրաստանի գավառներում, որոնք թողնված են սեփական ճակատագրին և վրաց մամուլի հակահայ քարոզչության ոգով տոգորված տեղական վարչության ողորմությանը»[40]: 1919 թ. հունվարին նույնատիպ բողոքով Վրաստանի կառավարությանն էր դիմել Սոչիի Ռուսական ազգային խորհուրդը[41]: Վրաց զինվորականների վարքագիծը ապստամբության պատճառ դարձավ, որը սկսվեց 1919 թ. հունվարի 31-ին Գոռնոե Լոո գյուղում: Վրաց զինվորական իշխանություններն առանց ելույթի պատճառներն իմանալու, անմիջապես հրանոթներ ուղղեցին հայերի դեմ[42]: Միաժամանակ սուտ լուրեր էին տարածվել, թե իբր մի քանի հարյուր զինված հայեր շարժվում են դեպի Ադլեր[43], չի բացառվում, որ դրանք վրացական զինվորականների միջև տիրող խուճապի հետևանք էին: Փետրվարի 3-ին Սոչիի Հայկական խորհուրդն անհապաղ միջամտության խնդրանքով դիմել էր Այսրկովկասում բրիտանական հրամանատարությանը, որը, դիմողների կարծիքով, խաղաղ միջոցներով պիտի հարթեր միջադեպը: Խորհուրդը մտահոգություն էր հայտնում, որ մասնակի ելույթը Գոռնոե Լոո գյուղում կարող է ընդհանուր բախման վերածվել: Դիմումի բովանդակությունն անգլիացիները հեռախոսակապով իսկույն հայտնել էին Վրաստանի կառավարությանը[44]: Փետրվարի 6-ին կառավարության քարտուղարությունում սղագրել էին Մերձսևծովյան շրջաններում Վրաստանի ներկայացուցչի՝ Մուհրան Խոչոլավայի, զեկուցումը: Նա հայտնում էր, որ փետրվարի 3-ից, դեպքերը քննելու նպատակով իր գլխավորությամբ հատուկ հանձնաժողով է գործում: Արձանագրվել է երկու զոհ հայկական կողմից, կորուստներ կան նաև վրացական զինվորականների շարքերում: Չնայած որ, ըստ սկզբնական տեղեկությունների, Խոչոլավայի մոտ ստեղծվել է իրական ապստամբության տպավորություն, սակայն նա հաղորդում է, որ հակամարտությունը, ի վերջո, խաղաղ միջոցներով վերացվել է: Վերլուծելով ելույթի պատճառները, նա նշում է շրջանային կոմիսար Ջնելաձեի թեթևամիտ վերաբերմունքը տեղի բնակչության կարիքներին և պահանջներին: Վրաց բարձրաստիճան պաշտոնյան չէր բացառում իր համար անհայտ նաև մեկ այլ ուժի չար կամքը: Միաժամանակ նա վկայում է. «Ես անձամբ տեսել եմ հետևանքները մի շարք անթույլատրելի գործերի, հափշտակումների և կոպիտ վերաբերմունքի բնակչության նկատմամբ [վրաց] զինվորականների կողմից»[45]: Խոչոլավայի զեկուցագրում տեղի հայերի վարքագծի վերաբերյալ ոչ մի մեղադրանք չկա, փաստաթուղթը նրանց նկատմամբ բարյացակամ ոգով է ներշնչված: Վրաստանում ՀՀ դեսպանորդը Սոչիի հայերի ապստամբության պատճառների մասին զե-

---

[40] Ս. Վ ր ա ց յ ա ն. Հայաստանի Հանրապետություն. Երևան, 1993, էջ 243-244:
[41] ՎԿՊԱ, ֆ. 1861, ց. 2, գ. 116, թ. 15:
[42] ՀԱԱ, ֆ. 276, ց. 1, գ. 140, թ. 3,4:
[43] ՎԿՊԱ, ֆ. 1861, ց. 2, գ. 116, թ. 22:
[44] Նույն տեղում, գ. 38, թ. 17-21:
[45] Նույն տեղում, գ. 116, թ. 22-27:

կուցեց Երևան, գրելով. «Վրաց իշխանությունների թշնամական վերաբերմունքը դեպի այդ շրջանի հայերը, ոչ ոքի մեջ կասկած չպիտի հարուցի»[46]:

1919 թ. փետրվարի 6-ին կամավորականները Սոչիից դուրս քշեցին վրացական զորքերը, որից հետո նվաճեցին Գագրայի տեղամասը: Առաջացավ Սոչիի ռազմաճակատը, որը պաշտպանվում էր Կամավորական բանակի 1500 հայերից կազմված զորամասի կողմից[47]: Ինչպես հաղորդում էր Վրաստանում ՀՀ դեսպանորդ, վրաց իշխանությունների կարծիքով Կամավորական բանակի հետ ընդհարման պատճառը հայերն էին[48]: Փաստերը վկայում են, որ հայ բնակչության մասնակի ելույթը չէր կարող պատճառ դառնալ Սոչիի և Գագրայի գրավմանը: Կամավորականների և Վրաստանի բախման հիմքում ընկած էր տարածքային վեճը: 1918 թ. սեպտեմբերին նախարար Ե. Գեղեճկորին համոզում էր վարչապետ Ժորդանիային՝ օգտվել հարմար պահից և պաշտոնապես միացնել Սոչիի շրջանը Վրաստանին, նշելով, որ հակառակ վարքագիծն աններելի է և նույնիսկ հանցավոր կառավարության համար: Միաժամանակ նախարարը շեշտում էր, որ շրջանի միացումը փաստի առջև կդնի Կամավորական բանակի հրամանատարությանը[49]: Նույն ժամանակ կառավարության ներկայացուցիչ Անջափարիձեն զգուշացնում էր ռազմական նախարարին, թե շրջանին տիրելու ցանկությունը կհանգեցնի լուրջ բախման: Նրա կարծիքով տարածքը կարելի էր պահել միայն գերմանացիների օժանդակությամբ, որոնց զորամասը գտնվում էր Ադլերում: Հակառակ պարագայում ներկայացուցիչն առաջարկում էր ուշադրությունը սևեռել Վրաստանի պատմական սահմանի վրա[50]: Հետագայում, անտեսելով դաշնակից Գերմանիայի պարտության փաստը և բրիտանական զորքերի հրամանատարության ոչ նպաստավոր դիրքորոշումը, վրացական իշխանությունների ջանքերով 1918 թ. դեկտեմբերին հրավիրված Սոչիի շրջանի բնակչության համագումարը կողմ քվեարկեց Վրաստանի կազմում լինելու առաջարկին, թեպետ ժամանակավոր՝ մինչև Ռուսաստանի դեմոկրատական դաշնային հանրապետության ձևավորումը[51]:

Ինչպես գրում էր Ա. Լուկոմսկոյը, «Սոչիի շրջանում վրացական իշխանության թոթափումից հետո թյուրիմացությունները շարունակվում էին հարևան Սուխումի շրջանում հայերի և աբխազների նկատմամբ վրացական իշխանությունների վերաբերմունքի պատճառով»[52]: Երկու կողմերը, և՛ վրացական, և՛ Կամավորական, միջնորդության խնդրանքով դիմում էին Այսրկովկասում բրիտանական բանակի հրամանատարությանը: 1919 թ. փետրվարի 26-ին Ա. Դենիկինը նամակով դիմում է Բրիտանական ռազմական միսիայի պետ գեներալ Իրիգսին, որտեղ մասնավորապես ասված է. «...Վրացական զինվորական իշխանությունները ռազմատուգանք

---

46 ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 350, թ. 2 շրջ., թ. 3:
47 Նույն տեղում, գ. 450, թ. 3, 5:
48 Նույն տեղում, գ. 350, թ. 3:
49 ՎԿՊԱ, ֆ. 1861, ց. 2, գ. 26, թ. 38–40:
50 Նույն տեղում, գ. 28, թ. 28–30 շրջ.:
51 Նույն տեղում, թ. 91-93:
52 С. Л а к о б а. Очерки..., с. 77.

են դրել Սուխումի շրջանի Գուդաուտայի տեղամասի հայաբնակ գյուղերի վրա... Բնակիչները... միջոցներ չունեին կատարելու իրենց առջև դրված պահանջները: Փետրվարի 10-ին վրացական զորքերը, շրջապատելով գյուղերը, սկսեցին գնդակոծել հրանոթներից և գնդացիրներից խաղաղ բնակչությունը... Խնդրում եմ ... հասցնել ... իմ բողոքը անպաշտպան հայ բնակչության նկատմամբ բռնությունների վերաբերյալ և խնդրում եմ եռանդուն ճնշում գործադրել վրացական կառավարության վրա վայրագություններին վերջ տալու համար»[53]: Վրաց պատմաբանները Դենիկինի կողմից հայերի և աբխազների շահերի պաշտպանության առաքելությունը համարում են սադրանք, որի նպատակն էր արդարացնել իր զավթողական քաղաքականությունը Վրաստանի նկատմամբ[54]: Վրաց հեղինակի կարծիքով, բնակչությունից անցանկալի բռնագրավումները, որոնք բնական դժգոհություն էին առաջացնում, պայմանավորված էին Վրաստանի տարածքային ամբողջականության և իրավակարգի պաշտպանության ուղղությամբ գործադրված միջոցառումներով[55]: 1919 թ. ապրիլին վրացական զորքերը անցան հակահարձակման և ետ վերցրին Գագրայի տեղամասը: Ինչպես տեղեկացնում էր Սուխումում ՀՀ հյուպատոսը, Գագրայի տեղամասի հայ բնակչությունը Կամավորների և վրացական զորքերի բախումների ժամանակ սնանկացել է, քանի որ զորքը սնվում էր հայերի հաշվին: Հյուպատոսի վկայությամբ տեղամասի հայերի վիճակը աննկարագրելի ծանր էր և դիտորդի վրա ճնշող տպավորություն էր թողել[56]: Վրաց զինվորականները կասկածում էին հայերին Կամավորականներին աջակցության գործում և վրեժ էին լուծում նրանցից[57]: Մեկ այլ զեկույցում ՀՀ հյուպատոսը գրում է արտգործնախարարին, որ վրացական բանակը հրով և սրով անցել է Գագրայի տեղամասով, որպես պատրվակ օգտագործելով այն, թե հայերը հրավիրվել էին Կամավորականներին Սոչիի շրջան: Հյուպատոսը ոչինչ չի ասում կոնկրետ դեպքերի մասին, նշելով միայն, որ վրացական ռազմական իշխանությունների անօրինականություններն այս տեղամասում հնարավոր չէ նկարագրել: Նա հայտնում է, որ Աբխազիայում Վրաստանի կառավարության ներկայացուցիչ Ի. Ռամիշվիլու խոստովանությամբ, առանց վրաց իշխանությունների օգնության հնարավոր չէր վերացնել հասցված կորուստը, այդպիսով չէր ժխտվում այն, որ դեպքն իրոք տեղի էր ունեցել[58]:

1919 թ. մարտի 16-ին Սուխումի շրջանի 170 հայեր իրենց ստորագրություններով վավերացված նամակ են ուղարկում Թիֆլիսում ՀՀ դեսպանատուն և հայտարարելով իրենց Հայաստանի հպատակներ, խնդրում են ներկայացուցչություն բացել Սուխումում[59]: 1919 թ. հոկտեմբերի 28-ին արտգործնախարար Ալ. Խատիսյանը շրջաբերական նամակ է ստորագրում, որտեղ կարևորում է հյուպատոսությունների բացման հարցը, քանի որ ՀՀ

---

[53] Деникин–Юденич–Врангель, с. 96.

[54] Д. Гамахария, Б. Гогия. Նշվ. աշխ., էջ 90–91:

[55] А. Ментешашвили. Из истории взаимоотношений..., с. 24.

[56] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 409, թ. 3,4:

[57] Նույն տեղում, թ. 5:

[58] Նույն տեղում, թ. 11,12:

[59] Նույն տեղում, գ. 350, թ. 6:

կառավարությունը տեղյակ չէր հայ գաղութների կյանքի մասին[60]: 1919 թ. հունիսի 25-ին Վրաստանում ՀՀ ներկայացուցիչ Լ. Եվանգուլովի զեկուցագրում ԱԳՆ-ին առաջարկվում է հպատակության հարցը վճռելիս ի նկատի առնել այն հանգամանքը, որ Սուխումի և Սոչիի հայերի կողմից Հայաստանի քաղաքացիություն ընդունելու պարագայում այդ փաստը կօգտագործվի Վրաստանի կառավարության կողմից՝ հայերին, իբրև օտարների, հողային սեփականության իրավունքից զրկելու նպատակով[61]: Ինչպես հայտնի է դառնում 1919 թ. սեպտեմբերի 26-ի Եվանգուլովի զեկուցագրից, նրան այցելել էր Սուխումի շրջանային Հայոց ազգային խորհրդի անդամ Խ. Ավդալբեկյանը և պնդել, որ հյուպատոսարանի բացումը Սուխումում անհրաժեշտ չէ, քանի որ կարող է փչացնել հարաբերությունները վրաց իշխանությունների հետ: Ավդալբեկյանի կարծիքով Ազգային խորհուրդը ոչ միայն հոգում է գաղութի կարիքների որոշ մասը, այլև կարող է հյուպատոսական գործ վարել[62]: Սակայն 1919 թ. օգոստոսի 1-ին Եվանգուլովը ՀՀ կառավարության անունից դիմել էր Վրաստանի իշխանություններին. «Սուխումի շրջանում բնակվում են մեծ թվով նախկին թուրքահպատակ հայեր: Նրանց շահերի պաշտպանության համար Հայաստանի կառավարությունը նպատակահարմար է գտնում հյուպատոսարան հիմնել Սուխումում: Խնդրում եմ տեղեկացնել՝ Վրաստանի կառավարության կողմից այս առաջարկի իրականացումը կարո՞ղ է որևէ խոչընդոտի հանդիպել»[63]: Արդեն օգոստոսի 7-ին Վրաստանի կառավարությունը դրական որոշում է կայացնում[64]: 1919 թ. նոյեմբերի 15-ին Եվանգուլովը արտգործնախարարին առաջարկում է ՀՀ հյուպատոսարան բացել նաև Սոչիում՝ հիմնավորելով, թե ժամանակին ներկայացուցչություն ունենալու պարագայում համապատասխանորեն կպաշտպանվեին հայերի շահերը և կկանխվեր նրանց ապստամբությունը: Այժմ, Եվանգուլովի կարծիքով, ներկայացուցիչը պետք է նպաստեր հայերի չեզոքությանը և հայրենադարձությանը[65]: Սակայն ՀՀ արտգործնախարարի հրահանգով Սոչիի շրջանն ընդգրկվեց Սուխումի հյուպատոսարանի գործունեության դոտում[66]: Եվանգուլովի երաշխավորությամբ ՀՀ ԱԳՆ Սուխումում հյուպատոս նշանակեց Թիֆլիսի ներկայացուցչության խորհրդական Վաղարշակ Սահակյանին, քանի որ վրացական կողմը առարկություն չուներ: Հեռագրի վրա նշում կա՝ ս. թ. նոյեմբերի 1-ից[67]:

Հասնելով Սուխում՝ Վ. Սահակյանը տեղեկացնում է ՀՀ ԱԳ նախարարին, որ Վրաստանի կառավարության իշխանությունը Աբխազիայում վերջնականորեն չի հաստատվել, քանի որ պայքար է ընթանում երկրամասի լայն ինքնավարության կողմնակիցների և վրաց իշխանությունների

---

[60] ՀԱԱ, ֆ. 276, ց. 1, գ. 33, թ. 199, 200:
[61] Նույն տեղում, թ. 136-136 շրջ.:
[62] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 350, թ. 8:
[63] ՎԿՊՊԱ, ֆ. 1861, ց. 2, գ. 95, թ. 2: Փաստաթուղթը հիշատակվում է՝ ՀԱԱ, ֆ. 276, ց, 1, գ, 155, թ. 2:
[64] ՀԱԱ, ֆ. 276, ց. 1, գ. 155, թ. 7:
[65] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 35, թ. 3:
[66] Նույն տեղում, գ. 409, թ. 52, 53:
[67] Նույն տեղում, գ. 350, թ. 9:

միջև, որի պատճառով էլ կառավարման բնագավառում խառնաշփոթ է տիրում[68]:

1919 թ. փետրվարի 13-ին համընդհանուր, հավասար, ուղղակի, գաղտնի քվեարկության սկզբունքներով ընտրվել էր Աբխազիայի ժողովրդական խորհուրդը (ԱԺԽ), որն էլ ձևավորեց տարածքային գործադիր իշխանություն՝ Կոմիսարիատ անվանումով: Սուխումի հայության գերակշռող մասը, համարվելով թուրքահպատակ, զուրկ էր ընտրություններին մասնակցելու իրավունքից: Ձայնի իրավունք ունեցողները քվեարկեցին Վրացական սոցիալ-դեմոկրատական կուսակցության օգտին, որի ցուցակով ԱԺԽ անդամ ընտրվեց Հայոց խորհրդի նախագահ Խ. Ավդալբեկյանը: Վրաց հեղինակները շեշտում են նրա եռանդուն աջակցությունը Վրաստանի կառավարության քաղաքականությանը[69]: Սուխումի շրջանում գործող ՀՅԴ տեղական կոմիտեն որևէ կերպ չարտահայտեց իր դիրքորոշումը[70]: 1919 թ. մարտի 20-ին ԱԺԽ-ն ընդունեց «Աբխազիայի ինքնավարության ակտը»[71]: Երկրամասի վերջնական իրավական կարգավիճակը պետք է որոշեր Վրաստանի ապագա սահմանադրությունը և «Ինքնավար Աբխազիայի կանոնակարգը»: Աբխազիայի սոցիալ-դեմոկրատները, որոնք ԱԺԽ-ում մեծամասնություն էին կազմում, հանդես եկան մարզային ինքնակառավարման, իսկ ընդդիմությունը՝ քաղաքական լայն ինքնավարության պահանջով: ԱԺԽ-ն համարվում էր օրենսդրական մարմին, սակայն մինչև ինքնակառավարման մասին կանոնակարգի հաստատումը, նրա լիազորությունների շրջանը սահմանված չէր: Այդ իսկ պատճառով ԱԺԽ-ն ներկայացուցչական ֆունկցիա ուներ: Ժամանակակիցների վկայությամբ և՛ ԱԺԽ-ի, և՛ Կոմիսարիատի դերը ձևական էր. իրական իշխանական լծակները գտնվում էին վրացական զինվորական հրամանատարության ձեռքում: Թիֆլիսի մամուլը կասկածի տակ էր դնում Աբխազիայի ինքնավարության անքակտելիության մասին Վրաստանի կառավարության հավաստիացումները[72]: 1920 թ. հունվարի 21-ին ԱԺԽ-ին բողոքով դիմել էին Գագրայի տեղամասում բնակվող հայերի պաշտոնական ներկայացուցիչները: «Վրաց զինվորականները,–գրում էին նրանք,– գիշերներով հարձակվում են խաղաղ բնակիչների վրա, և սպառնալով դնդակահարել, դրամ են պահանջում: Ստանալով մի քանի հազար ռուբլի, հեռանում են, հակառակ դեպքում՝ սպանում են... Շարքայինների և սպաների վերաբերմունքը հայերի նկատմամբ վերին աստիճանի արհամարհական է և սպառնալի»[73]: Զեկուցագրերից մեկում Սահակյանն առաջարկում է բարձրացնել Գագրայում փոխհյուպատոս ունենալու հարցը, քանի որ աբխազական իշխանությունների ազդեցությունը շրջանում աննշան է[74]:

---

[68] Նույն տեղում, գ. 409, թ. 20, 21:

[69] Д. Гамахария, Б. Гогия. Նշվ. աշխ., էջ 91:

[70] Հ. Ալվրցյան. Աբխազիայի Հայկական համայնքը.– Հայրենի Ջավախք. Բեյրութ, 2002, էջ 380:

[71] С. Лакоба. Очерки..., с. 74–75; А. Ментешашвили. Из истории взаимоотношений..., с. 46, 47.

[72] "Социал-демократ", 20.X.1919; "Слово", 20.VIII.1920.

[73] История Абхазии, с. 321.

[74] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 409, թ. 4:

Հյուպատոսության գործունեության առաջին իսկ օրից կարևորվում էին մի շարք հարցեր՝ հայրենադարձության, Սուխումի շրջանի հայերի քաղաքացիական պատկանելության և նրանց զորակոչի հարցերը, որոնց լուծումը բարդանում էր հյուպատոսի և տեղի Հայոց խորհրդի միջև անբարյացակամ հարաբերությունների պատճառով: Նրանց տարաձայնությունները տարածվում էին նույնիսկ Սուխումի շրջանում բնակվող հայերի թվի շուրջը: Սահակյանը նշում է 25000[75], իսկ Խորհուրդը՝ 30000[76]:

1920 թ. մարտի 2-ին հյուպատոսը հաշվետվություն է ներկայացնում Աբխազիայում հայերի քաղաքական և տնտեսական իրավիճակի մասին: Նա նշում է, որ Վրաստանի կառավարության կողմից ծխախոտի առևտրի պետական մենաշնորհի հաստատումից հետո հայերը կարծում էին, թե Աբխազիայում այլևս ապրել հնարավոր չէ և պահանջում էին իրենց Հայաստան տեղափոխել: Հակառակ դեպքում սպառնում էին արտագաղթել ցանկացած այլ երկիր[77]: 1920 թ. ամռանը Թիֆլիսում գտնվող ԱԺԽ-ի պատվիրակությունը բողոքում էր Վրաստանի վարչապետ Ն. Ժորդանիային, որ ծխախոտային մենաշնորհը գյուղացիների միջավայրում ուժգին բողոք է առաջացրել և կործանել այս գյուղատնտեսական կուլտուրայի մշակումը[78]:

Մյուս հարցը, որը հուզում էր բնակչությանը, 21 տարին լրացած հայ երիտասարդների զորակոչն էր Վրաստանի բանակ: Այս որոշումն առաջացրեց տեղի հայերի զայրույթը: Սա տեղի ունեցավ այն պարագայում, երբ աբխազները Վրաստանի կառավարության կողմից ազատված էին զինապարտությունից և կարող էին կամավոր ծառայել բանակում[79]: Հյուպատոսարանի բացումից անմիջապես հետո 700 հայ ընտանիք Հայաստանի քաղաքացիություն ձևակերպեց[80]: Թիֆլիսում ընթացող բանակցություններում ՀՀ պատվիրակությունը դիմեց վրացական կողմին, որն էլ հրաժարվեց հետապնդել զորակոչից խուսափողներին. նրանք ազատվեցին կալանքից, բանակից զորացրվեցին Վրաստանի քաղաքացիություն չունեցող հայերը: Միաժամանակ Սուխումի հյուպատոսը հանդես եկավ միջնորդությամբ՝ չտարածել զինապարտությունը շրջանում բնակվող Հայաստանի քաղաքացիների վրա մինչև նրանց հայրենիք տեղափոխվելը[81]: 1919 թ. դեկտեմբերի 9-ի նամակում նշված է, որ թեպետ ռազմական նախարար Ք. Արարատովն անցանկալի էր համարում զորակոչն իրականացնել Հայաստանի սահմաններից դուրս, միաժամանակ նա նպատակահարմար էր գտնում առաջարկել երիտասարդներին իրենց հաշվին մեկնել Հայաստան: Հակառակ դեպքում նրանք կհամարվեին Վրաստանի քաղաքացի և պետք է ծառայեին տեղում[82]:

---

[75] Նույն տեղում, թ. 11:
[76] Նույն տեղում, թ. 60:
[77] Նույն տեղում, թ. 16 (ռուս.):
[78] Д. Гамахария, Б. Гогия. Նշվ. աշխ., էջ 463, վավ. № 254:
[79] ՎԿՊԱ, ֆ. 1861, ց. 1, գ. 243, թ. 1-1 շրջ.:
[80] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 409, թ. 13-13 շրջ.:
[81] Նույն տեղում, թ. 32-32 շրջ. նույնը՝ թ. 33-33 շրջ.:
[82] ՀԱԱ, ֆ. 276, ց. 1, գ. 33, թ. 264 շրջ.:

Աբխազիայի լայն ինքնավարության կողմնակիցները դեմ էին հայերի արտագաղթին, քանի որ հայերի մեկնելուց հետո նրանց տեղը կզբաղեցնեին վերաբնակիչները Վրաստանից[83]: Երբ տեղի իշխանությունները, օգտագործելով Հայոց խորհրդի հեղինակությունը, առաջարկեցին հայ բնակչությանը Վրաստանի քաղաքացիություն ընդունել, Խորհուրդը, ինչպես հեգնանքով գրում է Սահակյանը, իր կամակատարությունով գերազանցեց վրացիների բոլոր սպասելիքները: Խորհրդի նախագահությունը, որը բաղկացած էր 20 հոգուց, խորհրդակցությանը հրավիրեց հայաբնակ գյուղերի 10 կոմիսար (գյուղապետ) և 10 ներկայացուցիչ գյուղացիներից: Ինքնակոչ համագումարի անունից հայտարարվեց Սուխումի շրջանի հայության կամքը՝ ընդունել Վրաստանի քաղաքացիություն[84]: Հայերի կողմից Վրաստանի քաղաքացիություն ընդունելու պարագայում, հյուպատոսի կարծիքով, Հայաստանը կզրկվի նրանց հովանավորելու իրավունքից, իսկ վրացական իշխանությունները վաղ թե ուշ կվտարեն հայերին Աբխազիայից: Քանի կար ձգտում՝ ուժեղացնել վրացական տարրը հայերի հաշվին, որոնք հյուպատոսի կարծիքով, կազմում էին երկրամասի բնակչության 1/4[85], վտանգ կար, որ ՀՀ պաշտպանությունից զուրկ հայերը կկորցնեին նաև շարժական գույքը և ծանր բեռ կդառնային Հայաստանի համար[86]: ԱԺԽ-ի պատվիրակությունը 1920 թ. ամռանը բողոքում է Վրաստանի հողագործության նախարար Ն. Խոմերիկիյին, որ Գագրայի տեղամասում կատարվում է վրացիների վերաբնակեցումը Գուրիայի մարզից, իսկ տեղացիներին հողը նույնիսկ կապալավարձով չէր տրվում: Պատվիրակները շեշտում էին միայն աբխազների և մեգրելների իրավունքները, իսկ հայերի մասին խոսք չկար[87]: 1920 թ. հունիսի 2-ի զեկուցագրում հյուպատոս Սահակյանը հայտնում էր, որ հողօգտագործման առումով Սուխումի շրջանի հայությունը դասվում է 4 կարգի: 80% մշակում էր պետական ֆոնդի հողերը՝ կապալավարձի հիմունքներով, որից իրավունք ուներ օգտվել ևս մեկ տարի: Մնացած 5% հողը ձեռք էր բերել ուրիշի անունով: Հողային բարեփոխման հետ կապված, իշխանությունները չէին ճանաչում նրանց իրավունքները: Հայերի մի մասը, օգտվելով կառավարական խառնաշփոթից, կարողացել էին ձևակերպել հողի սեփականությունը իրենց անունով, սակայն Կոմիսարիատը չէր ճանաչում սեփականատերերի իրավունքները մինչև Վրաստանի քաղաքացիության ընդունումը: Միայն 5%, որը ժամանակին ձևակերպել էր Ռուսաստանի կայսրության հպատակությունը և օրենքով համարվում էր Վրաստանի քաղաքացի, օգտվում էր լիակատար սեփականատիրոջ իրավունքից[88]:

1920 թ. ամռանը Երևան ժամանած Սուխումի Հայոց խորհրդի լիազորներ Եղիա Մուսելիմյանը և Երվանդ Մինասյանը հուլիսի 8-ին «Զեկուցագիր» հղեցին ՀՀ վարչապետին: Այստեղ նրանք բացատրում էին Խորհրդի

---

[83] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 409, թ. 14 շրջ., 16 շրջ.:
[84] Նույն տեղում, թ. 12:
[85] Ըստ 1926 թ. մարդահամարի՝ 1/7 կամ 14,2%. տե՛ս История Абхазии, с. 209.
[86] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ, 409, թ. 16:
[87] Д. Гамахария, Б. Гогия. Նշվ. աշխ., էջ 464, վավ. № 254:
[88] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 409, թ. 46:

նախագահության վրացամետ դիրքը, դանելով, որ Սուխումի շրջանի հայերի շահերին վնասում էին հայ-վրացական պատերազմը և Սոչիի հայության աջակցությունը Դենիկինին: Բացի այդ, վրաց տիրապետությունը հայերի նկատմամբ մեգրելների ագրեսիվ վերաբերմունքի պատճառ էր դարձել, որոնք մինչ այդ լոյալ դիրք ունեին: Քանի որ հողազուրկ մեգրել գյուղացիները 1918 թ. դարձել էին բոլշևիզմի կողմնակիցները Աբխազիայում, իշխանությունները նրանց սոցիալական պահանջներից զերծ պահելու նպատակով մեգրելների մեջ ազգայնական տրամադրություններ էին տարածում: Այդ պահին, մեգրելները համարելով իրենց արտոնյալ և առաջին հերթին պետություն ձևավորող տարր, սկսել էին մրցել հայերի հողաբաժիններին և կարողությանը տիրելու համար, քանի որ վերջինները ժամանակին վերցրել էին ամենալավ հողամասերը: Հողային բարեփոխման իրականացման կապակցությամբ կատարվում էր Վրաստանի քաղաքացիություն ունեցող գյուղացիներին աբխազ իշխաններից և ռուս խոշոր հողատերերից բռնագրավված հողի վաճառք: Տեղի հայերի համար տարիներ շարունակ կապալավարձի հիմունքով մշակվող հողը սեփականացնելու իրական հնարավորություն էր ստեղծվել: Հայոց խորհրդի կարծիքով, պահից օգտվելու համար կար մի միջոց՝ Վրաստանի կառավարության հետ համերաշխ լինելը: Այդ նպատակով հայերի համագումարը որոշեց առաջարկել տեղի հայությանը Վրաստանի քաղաքացիություն ընդունել և ծառայել նրա բանակում: Այդ քայլից հետո, կարճ ժամանակում իշխանությունները կտրուկ միջոցներ գործադրեցին, վերջ տալու հայերի դեմ ուղղված մեգրել և աբխազ տարրերի հալածանքներին: Ծխախոտի հայ «սպեկուլյանտները» տուժել էին պետական մենաշնորհից և դեմ էին Վրաստանի կառավարմանը: Այդ իսկ պատճառով, Խորհրդի պատվիրակների խոսքերով, ասեկոսներ էին տարածվում, թե Վրաստանի քաղաքացիություն ընդունողներն ընդմիշտ կդրկվեն հայրենադարձությունից: Խորհուրդը համոզված էր, որ Վրաստանի կառավարությունը միշտ էլ կաջակցի հայերի հայրենադարձությանը՝ փոխարենը նպատակ ունենալով Աբխազիայում վրացիներ բնակեցնել: Խորհրդի կարծիքով հայրենադարձության համար նպաստավոր պայմաններ դեռևս չէին ստեղծվել[89]: Որպես վրաց իշխանությունների բարյացակամ դիրքորոշման և Խորհրդի եռանդուն աշխատանքի ապացույց ասվում է, որ հայկական դպրոցների թիվն աճել էր 12-ից 30-ի, որտեղ ուսանում էր 1567 աշակերտ, այդ թվում 511 աղջիկ: Դպրոցներում դասավանդում էր 57 ուսուցիչ, որոնց աշխատանքը հսկում էին շրջանային տեսուչը և հրահանգիչը: Այս առումով պատվիրակները բողոքում էին հյուպատոս Սահակյանից, որը, չճշտելով իրավիճակը, սկսեց զինակոչիկներին Հայաստանի անձնագրեր բաժանել: Քանի որ հյուպատոսարանը լայն գործունեություն էր ծավալել հայրենադարձության ուղղությամբ, վրաց պետական շրջանակներում վերաբերմունքը Աբխազիայի հայերի նկատմամբ փոխվեց, որպես ժամանակավոր տարրի[90]: Պատվիրակները Խորհրդի անունից առաջարկում էին կամ փակել հյուպա-

[89] Նույն տեղում, թ. 61-61 շրջ.:
[90] Նույն տեղում, թ. 63:

տոսարանը, կամ էլ փոխել հյուպատոսին նշանակելով Խորհրդի հետ համաձայնեցված անձ (ցանկալի էր՝ համշենահայ)[91]*:*

Համադրելով Սահակյանի և Խորհրդի կարծիքները, ՀՀ կառավարությունը եկավ այն եզրակացության, որ Սուխումի հայությունը վաղ թե ուշ աբխազների և մեգրելների ճնշման տակ ստիպված է լինելու լքել շրջանը: Մարտավարական նկատառումներով, Վրաստանի կառավարությունը դեռ աջակցում էր տեղի հայերին որպես լրացուցիչ հակակշիռ անջատամետ աբխազներին: Նորաստեղծ ՀՀ-ն ուներ հայ բնակչության սուր կարիք և, կառավարության անդամների կարծիքով, պետք էր ամեն կերպ աջակցել հայրենադարձական տրամադրություններին, միաժամանակ ընդգիմանալով Վրաստանի քաղաքացիության ընդունմանը: Կառավարությունը կասկածում էր, որ դառնալով քաղաքացի և հողի լիիրավ սեփականատեր, հայ գյուղացին այլևս չի ցանկանա բռնել հայրենադարձության ճանապարհը: Որոշվել էր ՀՀ կառավարության մակարդակով պաշտպանել տեղի հայերի շահերը և նրանց շարժական գույքը, որը հնարավորություն կտար հայրենիքում ստեղծել նոր տնտեսություն: Ելնելով նշվածից, նպատակահարմար էր համարվել առաջարկել Վրաստանի կառավարությանը ճանաչել Սուխումի շրջանի բոլոր հայերին ՀՀ քաղաքացի, բացառությամբ առանձին հրաժարվողների, խնդրել պահպանել նրանց կապալավարձի իրավունքները ևս 2-3 տարով, որից հետո թույլատրել հայրենադարձությունն ամբողջ շարժական գույքով[92]*:*

Վրաստանի խորհրդայնացումից հետո Աբխազիայի հայ համայնքի համար մշակված Հայաստանի կառավարության ծրագիրը մոռացության մատնվեց, իսկ տեղի հայության կյանքում սկսվեց նոր ժամանակաշրջան:

ПОЛИТИЧЕСКАЯ СИТУАЦИЯ И ПОЛОЖЕНИЕ АМШЕНСКИХ АРМЯН В АБХАЗИИ В 1918-1920 гг.

БЕНИАМИН МАИЛЯН

Резюме

После провозглашения независимости Грузии Абхазия управлялась вооруженной силой, подконтрольной Грузинскому национальному совету. Делегация представителей абхазского народа в июне 1918 г. подписала договор с правительством Грузии, которое признало за Абхазией автономные права. Однако отношения сторон не были окончательно оформлены. Вопрос границы и статуса Абхазии вызвал вооруженный конфликт Грузии с белым движением, в результате которого пострадало армянское население Сочинского и Сухумского округов. Конфликт между Арменией и Грузией в декабре 1918 г. также отрицательно сказался на положении армян Абхазии. Для защиты их интересов в

[91] *Նույն տեղում, թ. 64:*

[92] *ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 409, թ. 56:*

ноябре 1919 г. в Сухуме было открыто консульство Республики Армения, которое занималось решением проблемы подданства местных армян. В этом вопросе политика Правительства Армении расходилась с позицией Армянского национального совета Сухумского округа. Последний выступал за принятие гражданства Грузии, власти которой обещали в обмен на это наделить армянских крестьян землей. Намерение Правительства Армении репатриировать армян Абхазии не осуществилось.

POLITICAL SITUATION AND CONDITION OF HAMSHEN ARMENIANS IN ABKHAZIA IN 1918-1920

BENIAMIN MAILYAN

S u m m a r y

After proclamation of independence of Georgia, Abkhazia was ruled by military force, which was under control of Georgian national council. Delegation of representatives of Abkhazian people concluded a treaty with Georgia's government in the June of 1918, that acknowledged autonomous rights of Abkhazia. However relationships of sides were not finally juridically legalized. The question of border and of the Abkhazian status evoked military conflict between Georgia and White movement from which suffered Armenian population of the Sochi and Sukhumi districts. The conflict between Armenia and Georgia affected negatively the Armenians of Abkhazia in the December of 1918, too. In the November of 1919, there was opened the consulate of Republic of Armenia for protection of their interests in Sukhumi, that was committed to solve the issues of local Armenians' citizenship. The policy of government of Armenia, regarding that question differed from the opinion of Armenian national council of the Sukhumi district. The latter stood up for the statement of adoption the naturalization of Georgia, authorities of which promised land to local Armenian peasants for that. The intention of government of Armenia to repatriate the Armenians of Abkhazia wasn't realized.